«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ընթերցանության տեխնիկայի զարգացումը 2-րդ դասարանում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Անժելա Պետրոսյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Սիամանթոյի անվան հ. 162 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԿԱՐԴԱԼՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ..... 5

ԿԱՐԴԱԼՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ 7

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ..... 9

ՀԱՎԵԼՎԱԾ 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԵՐԱ ՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր կարևորագույն խնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի և ընթերցանության հմտությունների ցածր մակարդակը, ինչի արդյունքում դրանից բխող խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման և ուսումնառության ընթացքում: Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:

Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունքներ:

Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդումէ մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից:

Տարրական դպրոցում ընթերցանության խրախուսման համար նախատեսված միջոցառումները, ըստ իրականացման ձևաչափի, պայմանականորեն բաժանված են 2 բաժինների՝ դասարանային և արտադասարանային:

Հետազոտության նպատակը՝ տարրական դասարաններում դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունը (որակական հատկանիշների պահպանմամբ), ապահովել մայրենի լեզվի տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռք բերման համար անհրաժեշտ պայմաններ:

Վերոնշյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. մաքրել, հղկել և հարստացնել երեխաների բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու ունակությունը

2. ձևավորել հաղորդակցական և համագործակցային կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ
3. ապահովել երեխայի անձի զարգացումը՝ իրականացնելով բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն
4. սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները (գիտեկիքները, փորձը, ձեռքբերումները)
5. գիտակցել մայրենի լեզվի արժեքների ձեռքբերման կարևորությունը և անհրաժեշտությունը
6. ձևավորել հայեցի մտածողություն, զարգացնել լեզվամտածողությունը:

ԿԱՐԴԱԼՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Կարդալու կարողության ձևավորման գերխնդիր է կրտսեր դպրոցականներին լավ կարդալ սովորեցնելն է: Իսկ ի՞նչ է նշանակում լավ կարդալ, ու՞մ են ասում՝ նա լավ է կարդում: Լավ կարդալը կարդալու կարողության բարձր մակարդակն է: Այն ունի որոշակի բնութագրիչներ, որոնք ներկայացնում են կարդալու որակները: Լավ կարդալը ունի մի շարք որակական հատկանիշներ, որոնք սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: Հենց այդ հատկություններով էլ բնութագրվում է լավ կարդալը: Լավ կարդալու որակներն են.

1. ճիշտ ու անսխալ կարդալ
2. հասկանալով կամ գիտակցորեն կարդալ
3. վարժ կամ սահուն կարդալ
4. արահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ
5. արագ կարդալ

Կարդալու որակական հատկանիշների ձևավորումը գերխնդիր է գրաճանաչության կազմակերպաման առաջին իսկ օրից, սակայն չպետք է մտածել, որ դրանք ձևավորվում են ու զարգանում հերթականությամբ՝ հաջորդաբար:

Ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի՝ բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտը բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի, բառերի ու վանկերի տեղերը: Ճիշտ կարդալը կարդացածը հասկանալու կարևորագույն նախապայմաննէ, դրա համար հարկավոր է դեռևս գրճանաչության շրջանում աշակերտներին սովորեցնել ամբողջական բառերով կարդալ:

Գիտակցորեն կամ հասկանալով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել: Կարդալը գիտակցական է այն ժամանակ, երբ կարդացողը ճիշտ և ամբողջականությամբ հասկանում է բնագրի բառերի իմաստը, նախադասությունների միտքը, առանձին նախադասությունների կամ հատվածների միջև եղած տրամաբանական և բովանդակային կապերը:

Վարժ կամ սահուն կարդալ ասելով հասկանում ենք առաջադրված նյութի՝ամբողջական բառերով, առանց անհարկի դադարների, անհրաժեշտ չափով արագ ու սահուն ընթերցումը: Ընդ որում՝ կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության

արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ընբռնմանը, ենթատեքստի կռահմանը:

Արտահայտիչ կամ գեղարվեստական կարդալու կարողությունը շատ մոտ է ասմունքի արվեստին և ամենադժվարն է ձևավորվում: Բարձրաձայն ընթերցանությունը համարվում է արտահայտիչ, երբ այն գրավում է լսողի ուշադրությունը և հետաքրքրություն է առաջացնում նրա մեջ: Արտահայտիչ կարդալը գեղեցկացնում է լեզուն, խոսքը դարձնում է պատկերավոր, նպաստում է նյութի ըմբռնմանը, բարձրացնում է աշակերտների գեղագիտական ճաշակը:

Արագ կարդալը ևս կարդալու որակական հատկանիշ է: Արագ կարդալու ուղղությամբ աշխատանք կարելի է իրականացնել միայն այն ժամանակ, երբ աշակերտն ազատ կարդում է ամբողջական բառերով և ունի լայն ընթերցողական տեսադաշտ:

Տարրական դասարանների դասարանական ընթերցումն իրականացնում են ուսուցիչն ու աշակերտները: Այսպիսով՝ լավ կարդալ նշանակում է կարդալ ճիշտ, հասկանալով, սահուն և արտահայտիչ: Այն իրականանում է քայլ առ քայլ, և յուրաքանչյուր քայլ ապահովում է հաջորդի ամրությունն ու ամբողջականությունը: Այստեղ դիտարկվեց կարդալու որակական հատկանիշները, որոնք պիտի ձևավորվեն և զարգանան տարրական կրթության ողջ ընթացքում: Այս ուղղությամբ աշխատանքը պիտի շարունակվի նաև հիմնական դպրոցում:

ԿԱՐԴԱԼՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տարրական դպրոցում կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն ու ձևավորումն իրականացվում է նյութի բազմակի ընթերցանության ճանապարհով՝ կիրառելով բազմաբնույթ նպատակներ և կազմակերպման ինքնատիպ ձևեր ունեցող կարդալու տեսակներ: Դրանք ոչ միայն նպաստում են կարդալու որակական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը, այլև մշակում են ընթերցողական կարողություններ, միևնույն ստեղծագործության բազմակի ընթերցման գործընթացը դարձնում են հետաքրքրական անձանձիր: Հետևաբար մայրենիի դասերի ժամանակ պիտի կիրառել կարդալու բոլոր տեսակներն էլ՝ անշուշտ հաշվի առնելով ստեղծագործության առանձնահատկությունները:

Մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի դասարանական ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում, շարունակելով, մեկնաբանելով կամ կանգառնելով, ընտրովի և դերերով: Սրանցից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

Տարրական դասարաններում արդարացված է և ընդունված բարձրաձայն կարդալը, քանի որ այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ձևավորում է կարդացածը հասկանալու կարողություն: «Ձայնով կարդալը ոչ միայն մշակում ու զարգացնում է երեխաների կարդալու հմտությունները, այլև սովորեցնում է խոսելու օրգանները, ձայնը և շնչառությունը ճիշտ կառավարելու արվեստը, որը կատարելության է հասնում ասմունքողների մոտ[1]»:

Տարրական դասարաններում բարձրաձայն կարդալուն զուգընթաց նաև լուրջ աշխատանք է պահանջվում մտքում կարդալու կարողության մշակման ուղղությամբ: Լուռ կարդալը մտքում կարդալն է, որն իրականացվում է դասարանում՝ ուսուցչի հսկողության ներքո (աչքերի շարժումով՝ առանց խոսքի օրգանների մասնակցությամբ): «Անցնելով մտքում կարդալուն՝ աշակերտը սկսում է հասկանալ նյութը և յուրացնել այն ներքին խոսքով: Բայց յուրացնելով նյութը՝ կրտսեր դպրոցականը հաճախ դժվարանում է բառերով արտահայտել այս

[1] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա (Տարրական դասարաններ), ուս. ձեռնարկ մանկավարժական բուհերի համար, Երևան, Լույս, 1980, էջ 151

կամ այն հասկացածը հաղորդել ուրիշ մարդկանց: Նման դեպքերում օգտակար է երեխաներին խորհուրդ տալ բարձրաձայն պատմել այն, ինչ կարդացել ու հասկացել են[2]»:

Շարունակելով կարդալը շատ արդյունավետ է տարրական դասարաններում: Երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով (մտքում կարդալով) հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, ուր կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով: Կարդալու այս տեսակի միջոցով միանգամից կարդում է ամբողջ դասարանը:

Մեկնաբանելով կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն: Մեկնաբանող ընթերցանությունը մեծապես նպաստում է բնագրի բովանդակության մեջ թափանցելուն, գործող անձանց և կերպարների էությունը ըմբռնելուն, ներկայացվող դեպքերի տրամաբանական և պատճառահետևանքային կապերը հասկանալուն, գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկնաբանելուն:

Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը, դուր եկած տողերը՝ դրանով իսկ ընդգծելով այդ անձանց բնավորության գծերը, հեղինակի կամ ընթերցողի համար կարևոր գաղափարները: Ընտրովի ընթեռրցանությունը մասնավորապես նպաստում է վերլուծական-համադրական, այսինքն՝ քննադատական մտածողության զարգացմանը: Ընտրովի ընթերցանությունը պիտի նախորդի դերերով ընթերցանությանը, որովհետև ընտրովի ընթերցանության ժամանակ երեխաները ծանոթանում են ստեղծագործության հերոսների հետ, հասկանում են նրանց արարքների դրդապատճառները:

Տարրական դասարաններում արտահայտիչ կարդալու կարողության մշակման գործում հատկապես մեծ է դերերով կարդալու նշանակությունը: Ամենավատ կարդացողն անգամ դերերով կարդալիս լավ է ընթերցում, որովհետև նա ձգտում է ճիշտ արտահայտելու գործող անձի հոգեվիճակը:

---

[2] «Հոգեբանություն» (ուս. ձեռնարկ Ա. Գ. Կովալյովի խմբագրությամբ), ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 1970, էջ 347

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Այս հետազոտական աշխատանքով ես կիսում եմ իմ փորձը: Ընթերցանության դասեր անցկացնելիս օգտագործել եմ վառ պատկերազարդումներով գրքեր, որոնք ճշգրիտ համապատասխանել են գրքի բովանդակությանը: Անցկացրել եմ ամենապարզ գրական խաղեր, կազմակերպել եմ ընթերցում բոլոր դասերին՝ կիրառելով ընթերցանության 5 րոպե մեթոդը: Այժմ ձեզ եմ ներկայացնում իմ իրականացրած դասերից մեկ դաս, որի ժամանակ կիրառել եմ ընթերցանության տեխնիկան զարգացնող մի շարք վարժանքներ:

Գտի՛ր նախադասությունը

Նպատակ-Սահուն կարդալու կարողությունների զարգացում

Ընթացքը-Սովորողները բացում են ուսումնասիրվող նույն տեքստը

Հրահանգ- Կարդուլու եմ տեքստի որևէ հատվածից բանալի բառը, իսկ դուք պետք է տեքստում աչքերով որոնեք և ընթերցեք այն նախադասությունը, որտեղ գործածված է այդ բառը: Եթե մի քանի նախադասություններում է այն գործածվել, կարդում ենք բոլոր նախադասությունները:

Ընթերցանության տեխնիկան շտկող ու զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր:

Ընթերցանության տեխնիկայի ձևավորման և մոտիվացման վարժանքներ.

● Շղթայաձև ընթերցանություն - մեկական բառ, նախադասություն, պարբերություն, երեխաները շարունակում են մեկը մյուսին շարունակելով

● Դինամիկ ընթերցում - գրատախտակի վրա գրված է 5-7 բառից բաղկացած սյունակ, գրված բառերի տառերի քանակը հերթով ավելանում է՝բառերի մեջ եղած բառերի աստիճանական աճով:

● Զույգերով ընթերցում – նույն տեքստը հերթով կարդում է երկու աշակերտ, այնուհետև միմյանց ընթերցածը մեկնաբանում են:

● Քարշակ – բարձրաձայն ընթերցվում է տեքստը՝ փոխելով ընթերցման արագությունը: Աշակերտները նույնպես կարդում են բարձրաձայն՝ փորձելով հետ չմնալ ուսուցչից:

● Թակարդ – ուսուցիչը կամ վարժ կարդացող աշակերտը կարդում է մի ծանոթ տեքստ և որոշ բառեր փոխում է հոմանիշներով: Մյուս աշակերտները փնտրում են փոխած բառերը:

● Շրջանաձև ընթերցում – աշակերտներն իրար հետևից մի քանի անգամ կարդում են փոքր տեքստը՝ բառ առ բառ:

● Մեկ անգամ էլ – այս վարժության համար տեքստից բացի անհրաժեշտ է վայրկենաչափ: Հանձնարարություն. կարդալ տեքստը մեկ րոպե տևողությամբ: Ուսուցիչը ուշադրություն է դարձնում ընթերցման արագությանը: Ժամանակը լրանալուն պես ընդհատում է: Նշում է, թե որքան կարդաց, որ հատվածին հասավ: Մի փոքր հանգստանում է, կարդում է նույն տեքստը դարձյալ 1 րոպե, դարձյալ նշում է կարդացածի տևողությունը, դիտարկում, որ այս անգամ ավելի շատ է ընթերցել: Երրորդ անգամ արդյունքն ավելի լավ կլինի: Երեխան ինքը տեսնում է իր առաջընթացը և ոգևորվում:

● Մոլորված տառեր – կանխարգումը զարգացնող վարժանք է: Տառերն ու բառերը երբեմն կորչում են, բայց նույնիսկ առանց մի քանի տառի և բառի հնարավոր է կարդալ:

Իրականացված վարժանքներ - (Հավելված 1)

Յուրաքանչյուր ամսվա վերջում իրականացրել եմ ընթերցանության մշտադիտարկում: Մշտադիդարկումը իրականացվել է անծանոթ տեքստի ընթերցմամբ, որի ժամանակ ստուգվել է սահունությունը, ճշգրտությունը, արտահայտչականությունը և ընկալումը:

Կիրառել եմ տարբեր մեթոդներ ու ռազմավարություններ՝ ընթերցանության խրախուսման և սովորողների ընթերցանության որակների բարելավման նպատակով: Ամեն ամիս կազմակերպել եմ կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացումը սովորողների կողմից: Աշակերտները նախապես իրենց ձեռքով պատրաստել են փոքրիկ գրքույկներ, որտեղ էլ կատարել են ընթերցած գրքի ծաղկաքաղը:

Կազմակերպել եմ ընթերցանության, ասմունքի, դերային խաղերի մրցույթներ, գրքի քննարկումներ: Կազմակերպել եմ վիկտորինաներ ընթերցած գրքերի շուրջ: Տարվա վերջում կազմակերպել եմ կարդացած գրքերի շնորհանդես և պատրաստել պաստառ «Կարդա՛» խորագրով: (Հավելված 2)

Ամփոփելով «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագիրը՝ 2-րդ դասարանի յուրաքանչյուր աշակերտի համար կազմել եմ թղթապանակ, որի մեջ գրանցվել է նրանց ընթերցանության տեխնիկայի ստուգման արդյունքները: Ստորև ներկայացնում եմ այդ թղթապանակից մեկ օրինակ: (Հավելված 3)

Հավելված 3

Դասարան	Սովորողի անուն, ազգանունը	Ընթերցանության արագությունը՝ բառ/րոպե	Ընթերցանության սահունությունը	Ընթերցանության ճշգրտությունը	Ընթերցանության ընկալումը
2-րդ	Նատալի Գրիգորյան	1-ին ընթերցանություն 1ր- 50 բառ	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու։	Կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության։	Ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, ապահովում է տրամաբանական դադարները։
2-րդ	Տիգրան Դովլաթյան	2-րդ ընթերցանություն 1ր- 56 բառ	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու։	Կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության։	Գրեթե ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, մեծ մասամբ ապահովում է տրամաբանական դադարները՝ երբեմն դա անելով ուսուցչի օգնությամբ։
2-րդ	Արթուր Համբարձումյան	3-րդ ընթերցանություն 1ր- 92 բառ	Կարդում է սահուն, առանց դժվարության, բառերն արտասանում է հստակ և ճշգրիտ՝ առանց կրկնելու կամ կմկմալու։	Կարդում է ճիշտ, բայց երբեմն կարիք ունի ուսուցչի ուղղորդման և օգնության։	Գրեթե ամբողջովին ընկալում է կարդացածի իմաստը, մեծ մասամբ ապահովում է տրամաբանական դադարները՝ երբեմն դա անելով ուսուցչի օգնությամբ։

Նատալին կարդում է բավականին սահուն, բառերը հիմնականում արտասանում է հստակ և ճշգրիտ, ընկալում է կարդացածի իմաստը:

Աշխատանքի ուղղություններ

1. Հարցերի միջոցով օգնել հասկանալ տեքստի բովանդակային շեշտը՝ խթանելով նաև տեքստի վերաբերյալ ինքնուրույն հարցեր ձևակերպել:

2. Հաճախակի կիրառել պարբերությունների շուրջ զույգային աշխատանք:

Ընթերցանության դասարանային աշխատանքների մասնակցությունը

Տիգրանը հաճույքով է մասնակցում ընթերցանության դասարանային աշխատանքներին.

● ընթերցած գրքի քննարկումներ

● գիրք ենք ստեղծում

● ծաղկաքաղ և գրքույկի էջերի համարակալում

● խաղ-վարժանքներ

Ընթերցանության արտադասարանային աշխատանքների մասնակցությունը

● «Հեքիաթը կարդում է…» գրադարանային դաս

● Հանդիպում ժամանակակից հեքիաթագրի հետ

● Էքսկուրսիա «Էդիտ Պրինտ» տպարան

Ընթերցած գրքի մասին տեղեկատվություն

Արթուրը ընթերցում է ուսուցչի կողմից հանձնարարված նյութերը:

Սիրում է ընթերցել «Ինքնուրույն ընթերցանություն» գրքից բնագրեր և քննարկել դասարանում:

Ընթերցել է Հովհաննես Թումանյանի հեքիաթներից՝

«Պոչատ աղվեսը» հեքիաթը նաև բեմականացվել է:

«Անխելք մարդը» հեքիաթի քննարկում գրադարանավարի և ԴԱԿ-ի հետ:

«Ոսկու կարասը»

«Սուտլիկ որսկանը»

Ծնողի բաժին

Տանը կազմակերպել է դասվարի կողմից տրված գրականության բարձրաձայն ընթերցանություն երեխայի համար։

Աջակցում է երեխային լրացնել գրքույկը՝ ըստ կարդացած գրքերի էջերի։

Օգնում է կարդացած յուրաքանչյուր գրքից ծաղկաքաղ անել։

Համագործակցում է գրադարանավարի հետ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ընթերցումն անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր առջև դնի նպատակ՝ զարգացնել աշակերտների ընթերցողական կարողությունները: Այս տարի ևս ես շարունակելու եմ աշխատել այս ծրագրով, որպեսզի էլ ավելի բարելավեմ տարրական դպրովում սովորողների ընթերցանության որակը և սեր առաջացնեմ դեպի գեղարվեստական գրականություն, որն էլ կզարգացնի ընթերցողական և լեզվական գրագիտությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանդակ հրատարակչություն, Երևան-2018
2. «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագիր, մեթոդական ուղեցույց, ԿԶՆԱԿ հիմադարամ, Երևան-2021